ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնք, 5-րդ փող./2 , E-mail *hatis.kotayq@mta.gov.am*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2017 թվականի N 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման հավելվածի 20-րդ կետի 4-րդ ենթակետերի, 21-րդ և 22-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի հունիսի 7-ի <<Տարահանման մարմինների փաստաթղթերի օրինակելի ձևերին հավանություն տալու և գործածության մեջ դնելու մասին>> N 501-Ա հրամանի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի հունիսի 27-ի N 275-Ա որոշման 3-րդ կետի պահանջները արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ նախապես բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանավորման, նախապատրաստման և անցկացման ապահովման նպատակով որոշում եմ.

1. Ստեղծել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հանձնաժողովի կազմում՝ աշխատանքային խմբեր՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հաստատել հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Հատիսի Վ. Վարդանյանի անվան միջն. դպրոցի բազայի վրա ստեղծել տարահանման /ընդունման/ հավաքակայան, որի պետ ի պաշտոնե համարել դպրոցի տնօրենին:

4. Տարահանման /ընդունման/ հավաքակայանի պետին՝ 10-օրյա ժամկետում իմ հաստատմանը ներկայացնել հավաքակայանի անձնակազմի պարտականությունները՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության հետ :

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնքի ղեկավարի 2013 թվականի օգոստոսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնքի տարահանման, ընդունման-տեղաբաշխման հանձնաժողովով ստեղծելու մասին» N 8-Ա որոշումը:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Օհան Սահակյանի վրա:

Համայնքի ղեկավար՝ Ս. Գարսևանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնք, 5-րդ փող./2 , E-mail *hatis.kotayq@mta.gov.am*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2017 թվականի N 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ելնելով համայնքապետարանի աշխատակազմում փաստաթղթաշրջանառության կանոնակարգման անհրաժեշտությունից

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնքի աշխատակազմի գործավարության կարգը՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված կարգից բխող գործառույթների իրականացումը:

Համայնքի ղեկավար՝ Ս. Գարսևանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՏԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հատիս համայնք, 5-րդ փող./2 , E-mail *hatis.kotayq@mta.gov.am*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբեր 2017 թվական N 10

ՏԵՂԱՄԱՍԱՑԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, ***որոշում եմ՝***

1. Տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի նոյեմբերի 5-ին կայանալիք խոշորացված համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրությունների անցկացման համար, Հատիս համայնքում սահմանել հետևյալ տեղամասային կենտրոնը 1) Կոտայքի մարզի Հատիս համայնքի Վ. Վարդանյանի անվան միջն. դպրոցի շենքը՝ 1-ին փողոց թիվ 1 հասցե:
2. Հանձնարարել՝ աշխատակազմի քարտուղար Օհան Սահակյանին, գործող կարգի համաձայն, տեղամասային կենտրոնի գտնվելու վայրի մասին իրազեկել լիազոր մարմնին՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

Համայնքի ղեկավար՝ Ս. Գարսևանյան